AURORA
HUMANITARIAN INITIATIVE

ԱՎՐՈՐԱ 2.0 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊՐԻԼ 2026

ՈՒՂԵՐՁ

Սիրելի ընկերներ,

Շնորհակալություն, որ հետաքրքրված եք մեր գործունեության հաջորդ շրջանով՝ «Ավրորա 2.0»-ով: Նախքան անդրադառնալը, թե ուր ենք շարժվում հաջորդիվ, թույլ տվեք պատմել, թե որտեղից ենք սկսել:

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը հիմնադրվել է 2015 թվականին՝ Հայոց ցեղասպանությունը վերապրողների անունից եւ ի երախտագիտություն նրանց փրկողների: Մեր նախաձեռնությունն անվանակոչվել է ի պատիվ Հայոց ցեղասպանությունը վերապրած Ավրորա Մարդիգանյանի, որն օգտագործելով իր ձայնը՝ միջոցներ հայթայթեց նույն սարսափների միջով անցած հայերի համար եւ օգնեց փրկել մի ամբողջ սերնդի:

Թեկուզ մեն-մենակ՝ նա որոշեց չլինել անտարբեր: Ի պատիվ նրա՝ մենք նույն կերպ ենք վարվում:

«Երախտագիտությունն՝ ի գործ» գաղափարն այն ներքին մղումն է, որը դրդում է դրական գործողությունների՝ ի պատասխան նրա, որ դու եւս ժամանակին օգտվել ես ուրիշների բարությունից: «Ավրորան» շնորհակալություն է հայտնում նրանց, ովքեր ավելի քան մեկ դար առաջ փրկեցին մեր ընտանիքներին, «Ավրորա» մրցանակը (1 միլիոն ԱՄՆ դոլար պարգեւ) շնորհելով նրանց հոգեւոր ժառանգներին՝ մերօրյա մարդասեր-հերոսներին: Նրանց շնորհիվ կգոյատեւի մեկ այլ սերունդ՝ գործով արտահայտելով իր երախտագիտությունը եւ շարունակելով այս դրական շղթան: Մինչեւ հիմա **ավելի քան 3.7 միլիոն մարդ**, որոնց օգնության ձեռք է մեկնել «Ավրորան», հնարավորություն ունի դա անելու, ու նրանց շարքերն ամեն օր համալրվում են:

Մինչ մենք մշակում էինք այս ռազմավարությունը, աշխարհն ավելի մռայլ գույներով էր ներկվում. տարեցտարի կրճատվում է մարդասիրության ոլորտի ֆինանսավորումը, իսկ մարդասիրական կարիքներն աճում են ու բերում ճակատագրական հետեւանքների: Մենք ինքներս հարց տվեցինք մեզ. «**Ինչպիսի՞ն կլիներ աշխարհը, եթե բավարար չափով մարդասերներ լինեին այնտեղ**: Ի՞նչ կլիներ, եթե մարդկության մեջ լավագույնը ներկայացնող այդ հատվածն ունենար անհրաժեշտ ռեսուրսներ»:

Տարիներ շարունակ մենք ականատես էինք լինում մի առանձնահատուկ երեւույթի՝ հետեւելով երկու կամ ավելի մարդասերների հանդիպումներին: Տեսնում էինք՝ ինչպես են անծանոթ մարդիկ հաճախ րոպեների ընթացքում դառնում ընկերներ, քննարկում համագործակցության անթիվ գաղափարներ, փնտրում միմյանց աջակցելու տարբեր ուղիներ: Նրանց մեջ էին ուսուցիչներ, քարոզիչներ, բժիշկներ ու ակտիվիստներ, որոնք մեր աչքի առաջ ձեւավորեցին կուռ համայնք: **73 երկրում եւ տարածքում** գործունեություն ծավալող արդեն **ավելի քան 100 ուժեղ անհատներից** կազմված «Ավրորայի» մարդասիրական համայնքը մեր պատասխանն է մեծ խնդիրներին:

«Ավրորա 2.0»-ը մեծ կարիքի պահին առաջնագծում աշխատող մարդասերների կողքին կանգնելու մեր ճանապարհային քարտեզն է: Մենք կապահովենք **ճկուն ֆինանսավորում**, որը կհասնի անմիջապես մարդասիրական գործիչներին: Մենք կաջակցենք **կարողությունների զարգացմանը**՝ մեր համայնքի իրական կարիքներին համապատասխան: Կօգտագործենք մեր **համախմբելու ուժը**՝ փոփոխություններ խթանելու նպատակով մարդասիրական առաջնորդներին, դոնորներին եւ գործընկերներին միավորելու համար:

Մենք մարդասիրության առանցքում դիտարկում ենք մարդուն եւ արթնացնում մարդասիրությունը յուրաքանչյուրիս մեջ:

«Ավրորայի» թիմի, համայնքի եւ բոլոր մարդասերների անունից՝ ես ուրախությամբ կոչ եմ անում ծանոթանալ, թե ինչ է սպասվում առաջիկայում: Եթե հետաքրքրի ձեզ, միացեք մեզ եւ կանգնեք նրանց կողքին, ովքեր ոտքի են կանգնում հանուն ուրիշների:

Խորին երախտագիտությամբ՝

Արմինե Աֆեյան
«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության ղեկավար

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ

1. Մարդասիրական օգնության կարիքը ռեկորդային բարձր է եւ շարունակում է աճել...

- **120 միլիոն մարդ աշխարհում լքել է իր տունը**՝ շարունակվող հակամարտությունների պատճառով: Սա ամենաբարձր ցուցանիշն է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: 2010 թվականից ի վեր տեղահանվածների թիվը կրկնապատկվել է (*ըստ ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի*):
- Հակամարտության կողմերն ավելի հաճախ են միջազգային մարդասիրական իրավունքն անտեսում, ինչը հանգեցնում է քաղաքացիական բնակչության թիրախավորման աճի եւ երբեւէ գրանցված զոհերի ամենաբարձր ցուցանիշի (*ըստ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի*):
- **Կլիմայի փոփոխությունը սրում է իրավիճակը**՝ հրահրելով նոր հակամարտություններ եւ ավելի շատ տեղահանություններ:

2. ...եւ իրական ժամանակում արձագանքելու մեր կարողությունը քայքայվում է

- **ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության փակման եւ այլ խոշոր դոնորների կատարած կրճատումների** պատճառով բազմաթիվ ծրագրեր դադարեցված են, խոցելի բնակչությունը մնացել է անպաշտպան: Միայն ԱՄՆ ֆինանսավորման կրճատումների պատճառով գրացվել է գրեթե 14 միլիոն մահ, որը հնարավոր էր կանխել (*ըստ Lancet ամսագրի*):
- Վերջին չորս տարվա ընթացքում մարդասիրական օգնության ոլորտի աշխատողների շրջանում տարեկան **զոհերի թիվը քառապատկվել է**: Միջազգային մարդասիրական իրավունքը պարբերաբար խախտվում է հակամարտությունների ժամանակ (*ըստ Մարդասիրական օգնության ոլորտի աշխատողների անվտանգության տվյալների բազայի (AWSD) եւ ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի*):

3. Այս ամբողջ ընթացքում մենք բախվում ենք մարդասիրական աճող ճգնաժամին

- **Մարդիկ, որոնք անմիջականորեն չեն առնչվում ճգնաժամին**, ավելի հաճախ տեղյակ են միայն աղմուկ հանած հակամարտություններից կամ ընդհանրապես **կտրված են** մարդասիրական խնդիրներից (*ըստ «Ռոյթերսի», CARE համաշխարհային ցանցի*):
- **Քաղաքական բեւեռացումը** շարունակում է աճել՝ առաջացնելով ցինիզմ եւ անտարբերություն (*ըստ «Էդելմանի» վստահության բարոմետրի*):
- Հավաքական ինստիտուտների (կրոն, կառավարություն) հանդեպ **վստահությունը** նվազում է կամ վտանգված է: Շատերի համար **մարդկության հանդեպ հիմնային հավատը ենթարկվում է փորձության** (*ըստ «Փյու» կենտրոնի, ՄԱԿ-ի Տնտեսական եւ սոցիալական հարցերի դեպարտամենտի, «Էդելմանի»*):
- **Նույնիսկ «մարդասիրական» տերմինն է դարձել վիճահարույց**, որն ընկալվում է նեղ իմաստով եւ օգտագործվում քաղաքական շահերի համար:
- **Արհեստական բանականությունն արդեն իրականություն է** եւ մարտահրավեր է նետում այն պատկերացումներին, թե ինչ է նշանակում լինել մարդ՝ տեխնոլոգիաների ավելի խորը եւ համապարփակ ինտեգրման ժամանակաշրջանում:

Այնուամենայնիվ, «Ավրորայի» հերոսներն ապացուցում են, որ կան անհատների խիզախ դրսեւորումներ, որոնք շարունակում են ոգեշնչել:

Մեր առաքելությունն ավելի արդիական ու կարեւոր է այսօր, քան երբեւէ: Հիմա ճիշտ պահն է սահմանելու մեր գործունեության ուղղությունը եւ ամրապնդելու մեր վճռականությունը:

«Ավրորա» մրցանակի դափնեկիր բժիշկ Դենիս Մուկվեգեն՝ կանանց հետ հանդիպման ժամանակ ԿԴՀ-ում, 2018 թ.
Լուսանկարը՝ Էնդրե Վեսթվիկի

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ավելի քան մեկ տասնամյակում «Ավրորա» մրցանակի խիստ ընտրական գործընթացի եւ վստահության վրա հիմնված յուրահատուկ մոտեցման միջոցով «Ավրորան» ձեւավորել է մարդասիրական առաջնորդների համաշխարհային համայնք: Այն «Ավրորա 2.0» ռազմավարական փոփոխության հիմքն է, որի նպատակն է խիզախ եւ կենսական գործունեության փառաբանումից անցնել դեպի մարդասիրության տարածումն ու ամրապնդումն ապագայում:

Մեր ամենաթանկարժեք ռեսուրսը մարդասիրական գործիչներն են համայնքներում՝ նրանց խիզախությունը, նվիրվածությունը եւ թողած ազդեցությունը: Նրանց պետք է պաշտպանել եւ աջակցել: «Ավրորան» կշարունակի անմիջական օգնություն տրամադրել տեղում գործող մարդասերներին «Ավրորա» մրցանակի միջոցով՝ միաժամանակ ավելի ուժեղ եւ կայուն աջակցություն ապահովելով «Ավրորայի» մարդասիրական համայնքին:

«Ավրորա 2.0»-ը կենտրոնանում է աշխատանքային չորս փոխկապակցված ոլորտների վրա, որոնք օգնում են առաջնագծի մարդասեր-առաջնորդներին շարունակելու իրենց աշխատանքը, ընդլայնելու այն եւ զարգացնելու.

- **Մրցանակ եւ աջակցություն դափնեկիրներին**. այս ուղղության հիմքում «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակն է, որը մնում է մեր գլխավոր նախաձեռնությունը: Այն այժմ շնորհվում է երկու տարին մեկ եւ զուգորդվում յուրաքանչյուր դափնեկրի գործունեության իրազեկման եւ նրա ազդեցությունը բարձրացնելու անհատական ծրագրով:
- **Մարդասիրական գործիչներին ուղղված ծրագրերն են** Մարդասիրական աջակցության հարթակը եւ Մարդասիրական-խորհրդատվական ֆոնդը:
- **Համայնքի ներգրավվածության** միջոցով մենք ձեւավորում ենք ազդեցիկ կապեր Մրցանակի առաջադրված թեկնածուներից կազմված «Ավրորայի» մարդասիրական համայնքի ներսում՝ երկու տարին մեկ անցկացվող Մարդասիրության թեմայով կոնֆերանսի եւ շարունակական առցանց շփումների միջոցով, որոնք խթանում ենք համայնքային կապերն ու համագործակցությունը:
- **Պատմությունների ներկայացման եւ ազդեցության** միջոցով մենք փոխում ենք հասարակական ընկալումներն այն մասին, թե ովքեր են մարդասիրական գործիչները, եւ ում պատասխանատվությունն է մարդասիրությունը: «Երախտագիտությունն՝ ի գործ» գաղափարը դարձնելով համաշխարհային արժեք՝ «Ավրորան» ձգտում է ոգեշնչել յուրաքանչյուրին՝ ճանաչելու սեփական մարդասիրական ներուժը եւ խթանելու վստահության վրա հիմնված դրամաշնորհների տրամադրումը:

«Ավրորա» մրցանակի դափնեկիր Մարգարիտ Բարանկիցեն Ռուանդայի Ռուամագանայի շրջանում, 2016 թ.
Լուսանկարը՝ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության

Մեր նպատակն է ստեղծել մի աշխարհ, որը կորացնում է անհատ-մարդասերներին՝ արթնացնելով մեր համընդհանուր մարդկայնությունը:

2020-ականների կեսերին մարդասիրությունը բախվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամենամեծ մարտահրավերներին: Տասնամյակներ անց «Ավրորայի» գոյության շնորհիվ.

- **Մարդասիրական համայնքն** ընդունում է «Ավրորայի» հերոսներին՝ որպես առաջնորդներ, որոնց խիզախությունն ու տեղայնացված լուծումները ձեւավորում են մարդասիրական ժամանակակից գործելակերպը:
- **Անհատ-մարդասերներն** ունեն ռեսուրսներ եւ կարողություն՝ իրենց համայնքներում ամենախիստ կարիքավորներին ծառայելու համար: Միասին գործելով որպես համաշխարհային համայնք՝ նրանք մեծացրել են իրենց ազդեցությունը եւ որոշումներ կայացնելու լիազորությունները:
- **Խոշոր դոնորները** զգալի ներդրումներ են կատարել «Ավրորային» բնորոշ՝ վստահության վրա հիմնված ֆինանսավորման եւ դրամաշնորհների տրամադրման առանձնահատուկ մոդելի մեջ:
- **Մարդասիրական արձագանքն** ավելի արդյունավետ է եւ կայուն, քանի որ ուժերն ու ռեսուրսներն ավելի մոտ են ամենաշատ տուժած համայնքներին:
- **Հանրության լայն շրջանակներ** մարդասիրական գործունեությունն ընկալում են որպես համընդհանուր մարդկայնության հիմնական արտահայտություն եւ ոգեշնչվում՝ իմաստալից քայլեր (մեծ, թե փոքր) ձեռնարկելու՝ ուրիշներին օգնելու համար:

Մարդասիրության թեմայով կոնֆերանսին՝ Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանում, 2025 թ.
Լուսանկարը՝ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Մեր առաքելությունն է սատարել անհատ-մարդասերներին՝ ճանաչման արժանացնելու, համագործակցության եւ հասարակական ընկալումների փոփոխության միջոցով:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

«Ավրորայի» հաջորդ փուլում մենք կանենք հետեւյալը.

Կազմակերպության մակարդակ

Զորացնել եւ աջակցել մեր մարդասիրական համայնքին՝ նոր նախաձեռնությունների եւ կայուն ներգրավվածության միջոցով:

Մեծացնել «Ավրորա» մրցանակի ճանաչելիությունը՝ որպես տեղական մարդասիրական գործունեության համար ամենահեղինակավոր համաշխարհային մրցանակ:

Համակարգային մակարդակ

Աշխատանք տանել դոնորների եւ մարդասիրական առաջնորդների հետ՝ տեղական գործիչներին աջակցությունը մեծացնելու՝ վստահության վրա հիմնված, ճկուն ֆինանսավորման եւ դրամաշնորհների տրամադրման համար:

Ընդլայնել մարդասիրությանն ուղղվող համաշխարհային աջակցությունը՝ պատմություններ ներկայացնելու միջոցով, որոնք կարեւորում են մարդուն յուրաքանչյուր մարդասիրական գործչի մեջ:

Հասարակական մակարդակ

Տարածել «Երախտագիտությունն՝ ի գործ» գաղափարը՝ այն դարձնելով համաշխարհային արժեք, որը հաճախ է մեջբերվում հանրային խոսույթում, ոգեշնչում անհատներին եւ հասարակությանը:

Դիտարկել միջսերնդային տրավման՝ որպես դրական փոփոխության խթան, երբ ցավը վերապրածները քաջություն են գտնում իրենց մեջ այն օգտագործելու՝ ի աջակցություն իրենց համայնքների:

ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԵԹԵ «Ավրորան» բացահայտում է,
աջակցում եւ զորացնում առաջնագծում գործող խիզախ մարդասերներին,

ԱՊԱ նրանց գործունեությունը դառնում է ավելի տեսանելի, ընդունելի եւ ազդեցիկ,

ԻՆՉԻ ՇՆՈՐՀԻՎ մարդասիրական արձագանքը՝ ավելի տեղայնացված,
արդյունավետ եւ լայնորեն կիրառելի:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հենասյուն 1

Մարդը՝ մարդասիրության առանցքում

Սատարել անհատ-մարդասերներին, որոնք աշխատում են երկարաժամկետ ազդեցություն թողնել մյուսների կյանքում՝ նրանց տրամադրելով անհրաժեշտ ռեսուրսներ, ճանաչելիություն եւ կապեր հաջողելու համար:

Զորացնել տեղում գործող մարդասերներին

1 Մրցանակ եւ աջակցություն դափնեկրին

- Երկու տարին մեկ շնորհվող **«Ավրորա» մրցանակ**
- Նպատակային **աջակցություն դափնեկրին**
- **«Ավրորայի» հետազոտական դրամաշնորհներ**

2 Մարդասերներին ուղղված ծրագրեր

- Կարողությունների զարգացման **Մարդասիրական աջակցության հարթակ**
- **Մարդասիրական-խորհրդատվական ֆոնդ**՝ կարեւոր, հրատապ կարիքների համար

Հենասյուն 2

...Եվ մարդասիրությունը յուրաքանչյուրի մեջ

Ոգեշնչել սովորական մարդկանց իրենց առօրյա կյանքում ստանձնել կարեւոր հանձնառություն եւ խիզախումի պատմություններ ներկայացնելու ու կարեւոր հարցեր պաշտպանելու միջոցով մարդասիրությունը դարձնել հավաքական պատասխանատվություն:

Խրախուսել եւ ոգեշնչել անհատներին եւ հանրությանը

3 Համայնքի ներգրավվածություն

- Երկու տարին մեկ անցկացվող **Մարդասիրության թեմայով կոնֆերանս**
- Շարունակական առցանց շփումներ եւ կապերի հաստատում

4 Պատմությունների ներկայացում եւ ազդեցություն

- «Ավրորայի» մարդասիրական համայնքի անդամների պատմությունների ներկայացում
- **«Երիտասարդական Ավրորա»** ծրագիր

ՄԵՐ ԾՐԱԳՐԵՐԸ

Գործունեության հաջորդ փուլում «Ավրորան», հենվելով Մրցանակի՝ որպես ծրագիր, ուժեղ կողմերի վրա, ընդլայնում է աջակցությունը համայնքներում գործող մարդասերներին եւ բարձրացնում նրանց մասին իրազեկությունն ամբողջ աշխարհում: «Ավրորան» ձգտում է տարածել մարդասիրությունն այս վճռորոշ պահին՝ **զորացնելով ամենադժվարին իրավիճակներում գործող մարդասերներին** եւ **ոգեշնչելով** մյուսներին իրացնելու *իրենց ներուժը*՝ գործելու որպես մարդասիրական գործիչներ, որտեղ էլ որ լինեն:

1. Մրցանակ եւ աջակցություն դափնեկրին

«Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակը (1 միլիոն ԱՄՆ դոլար պարգեւ) կշարունակի շնորհվել բացառիկ մարդասերներին: Շնորհիվ դրամաշնորհային եզակի մոդելի՝ «Ավրորա» մրցանակի դափնեկիրն ստանում է 300.000 ԱՄՆ դոլար դրամական պարգեւ եւ 600.000 ԱՄՆ դոլարը հատկացնում իր առաջադրած այլ ազդեցիկ մարդասերներին: «Ավրորայի» մյուս հերոսները (մրցանակի հավակնորդներ) միասին ստանում են մնացած 100.000 ԱՄՆ դոլարը՝ իրենց ուշագրավ ձեռքբերումների համար:

Ամեն երկու տարին մեկ կընտրվի նոր դափնեկիր եւ կիրականացվի **դափնեկրի աջակցության** երկամյա անհատական ծրագիր, որը ներառում է շահերի պաշտպանություն եւ թիրախային աշխատանք լրատվամիջոցների հետ, մասնակցություն համաշխարհային խոշոր հավաքներին, գործնական ուղեցույց, այդ թվում՝ միջոցների հայթայթման ռազմավարություն, կազմակերպչական կարողությունների զարգացում, ծրագրի մոնիթորինգ եւ գնահատում: Մրցանակի զորացմանը նպաստում է **«Ավրորա» հետազոտական դրամաշնորհներ** ծրագրի ներդրումը, որը ներգրավում է հարյուրավոր մարդկանց՝ բացահայտելու առավել անտեսված վայրերում գործող խիզախ մարդասերներին:

2. Մարդասիրական գործիչներին ուղղված ծրագրեր

Մարդասիրական աջակցության հարթակը Մրցանակի առաջադրված թեկնածուներից բաղկացած «Ավրորայի» մարդասիրական համայնքին տրամադրում է կարողությունների զարգացման եւ համայնքի ձեւավորման նոր հնարավորություններ՝ խմբային եւ անհատական ծրագրերի միջոցով: Դրան զուգահեռ՝ «Ավրորան» կգործարկի **Մարդասիրական-խորհրդատվական ֆոնդը**՝ «Ավրորայի» հերոսներին տրամադրելով ճկուն, վստահության վրա հիմնված ֆինանսավորում՝ ըստ Մրցանակի բացառիկ դրամաշնորհային մոդելի:

3. Համայնքի ներգրավվածություն

«Ավրորան» կշարունակի լինել կամուրջ մարդասիրության ոլորտում՝ միմյանց կապելով համայնքային մարդասերներին, դոնորներին, մարդասիրական միջազգային գործակալություններին, կարողությունների զարգացմանն ուղղված կազմակերպություններին եւ այլ հիմնական շահագրգիռ կողմերի: Այս ջանքերն առաջ է մղում **Մարդասիրության թեմայով կոնֆերանսը**, որն անցկացվում է երկու տարին մեկ եւ համախմբում «Ավրորայի» մարդասիրական համայնքին՝ ամենահրատապ խնդիրներն ուսումնասիրելու եւ դրանց վերաբերյալ աշխատանքային քննարկումներ անցկացնելու համար: «Ավրորան» կազմակերպում է նաեւ տարածաշրջանային միջոցառումներ ու վեբինարներ, մասնակցում համաշխարհային առաջատար ֆորումների:

4. Պատմությունների ներկայացում եւ ազդեցություն

Լրատվամիջոցների հետ համագործակցության եւ տեսալսողական նյութերի արտադրության միջոցով «Ավրորան» մարդասիրությունը ներկայացնում է որպես բնական արձագանք ճգնաժամերին եւ մարդկությանն ուղղված համընդհանուր հանձնառություն: Գտնելով «Ավրորայի» մարդասիրական համայնքի պատմությունները ներկայացնելու նոր ու հետաքրքիր ճանապարհներ՝ մենք ձեւավորում ենք հասարակական նոր ընկալում մարդուն մարդասիրության առանցքում դիտարկելու եւ մարդասիրությունը յուրաքանչյուրի մեջ արթնացնելու վերաբերյալ: **«Երիտասարդական Ավրորան»** ներգրավում է հաջորդ սերնդին՝ հնարավորություն տալով ուսանողներին մշակելու եւ իրականացնելու իրենց համայնքներում մարդասիրական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրեր:

«Ավրորա» մրցանակի դափնեկիր Զամիլա Աֆղանին՝ իր կողմից աջակցություն ստացած կանանց հետ Աֆղանստանում, 2017 թ.
Լուսանկարը՝ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«Ավրորա 2.0»-ի միջոցով մենք վերահաստատում ենք մեր հանձնառությունը՝ օգնելու նրանց, ովքեր օգնում են եւ կենսական աջակցություն ցուցաբերում ճգնաժամի մեջ գտնվող համայնքներին: Մենք աջակցում ենք համայնքներում մարդասիրական աշխատանք իրականացնողներին, նպաստում երկարաժամկետ լուծումներին եւ ռեսուրսներն ավելի մոտեցնում նրանց, ովքեր ամենաշատն ունեն դրանց կարիքը: Ամփոփելով «Երախտագիտությունն՝ ի գործ» գաղափարի վրա հիմնված գործունեության առաջին տասնամյակը՝ «Ավրորան» կշարունակի մեծացնել համաշխարհային ազդեցությունն առաջիկա տարիներին: Բայց դրա համար անհրաժեշտ է մեզնից յուրաքանչյուրի ներդրումը:

Ահա թե ինչպես կարող եք դառնալ մասնակից.

- **Աջակցեք «Ավրորային»**

  Նվիրաբերեք եւ օգնեք «Ավրորային» ընդլայնել իր կարողությունը՝ ֆինանսավորելու եւ աջակցելու առաջնագծում մարդասիրական աշխատանք իրականացնողներին՝ նպաստելով նրանց երկարաժամկետ գործունեությանը:

- **Ընդլայնեք շրջանակը**

  Բաժանորդագրվեք մեր տեղեկագրին, հետեւեք «Ավրորային» սոցիալական հարթակներում եւ տարածեք այն, ինչ հետաքրքիր է ձեզ: Կամ պարզապես պատմեք ձեր ընկերներին մեր աշխատանքի մասին:

- **Մասնակցեք եւ մնացեք կապի մեջ**

  Մասնակցեք «Ավրորայի» միջոցառումներին, հեռարձակումներին, տեղեկացեք անմիջապես «Ավրորայի» հերոսներից եւ գործընկերներից:

- **Փառաբանեք մարդասերներին**

  Առաջադրեք մերօրյա մարդասեր-հերոսներին «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակին:

Միասին մենք կարող ենք կանգնել նրանց կողքին, ովքեր ոտքի են կանգնում հանուն ուրիշների:

Միացեք մեզ:

«Ավրորա» մրցանակի դափնեկիր բժիշկ Թոմ Քաթինան Սուդանում, 2017 թ.
Լուսանկարը՝ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության

ԱՋԱԿՑԵՔ

AuroraHumanitarian.org

AuroraLuminaries.com